Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով Դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ Հայցվորի առաջարկած ապրանքը չի համապատասխանել Հրավերին կից տրված տեխնիկական բնութագրի պայմաններին, Դատարանը գտնում է, որ Հայցվորի հայտը չէր կարող գնահատվել բավարար և վիճարկվող արձանագրությունը իրավաչափ է:

Ինչ վերաբերում է Հայցվորի՝ արձանագրության հիմնավորվածության վերաբերյալ արված դիտարկմանը, ապա Դատարանը գտնում է, որ արձանագրության մեջ բավարար չափով շարադրված է հայտը մերժելու հիմնավորումները, հետևաբար Հայցվորի պնդումները այս մասով ևս անհիմն են:

Այսպիսով ելնելով վերոգրյալ հիմնավորումներից՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

Դատական ծախսերի լուծման հարցը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերը նշված իրավադրույթների լույսի ներքո՝ Դատարանն արձանագրում է, որ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից, որոնք գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն՝ բացառապես տվյալ գործի շրջանակներում դատական ծախսերի հետ կապված պահանջներ ներկայացված լինելու դեպքում:

Տվյալ պարագայում Հայցվորի կողմից վճարվել է <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով պետական տուրքի գումարը, իսկ հայցապահանջը մերժվել է, իսկ պետական տուրքից բացի այլ դատական ծախսեր առկա չեն,Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 17-րդ հոդվածի 7-րդ մասով, 109-րդ, 179-րդ, 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ, 360-362-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «ՓԻԷՖ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը՝ «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-24/14» ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.05.2024թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 3.2-րդ, 5.1-րդ և 5.2-րդ կետերով կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք Հայցվորի հայտը գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին բավարարող գնահատելու և վերջինիս ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am